Մրգավանի միջնակարդ դպրոց

Դասարան՝ 7-րդ

Առարկա՝ Հ. գրականություն, հայոց լեզու, ռուսաց լեզու

Ուսուցիչներ՝ Ա. Մինասյան, Գ. Բալայան

Դասի պլան

Թեմա **Հին հայկական և ռուսական խաղիկներ և հաշվերգեր**

Տիպը Դաս-ամփոփում

Մեթոդ Նախագծային աշխատանք

Դիդակտիկ նյութեր Ազգային կոլորիտ (հայկական և ռուսական),ազգային տիկնիկներ, թերթիկ (բուկլետ)

Միջառարկայական կապ ինֆորմատիկա, պատմություն, երաժշտություն, նկարչություն

Դասի նպատակը՝ Կարողանալ ճանաչել և սովորել հայկական և ռուսական Խաղիկները,հաշվերգերը:

Վերջնարդյունք Նախագծի իրականացման արդյունքում աշակերտը կկա

ողանա՝

անգիր արտասանել հին հայկական և ռուսական

խաղիկներն ու հաշվերգերը

գնահատել և արժևորել դրանց դերն ու նշանակությունը հայկական և ռուսական մշակույթների զարգացման գործում, խորացնի գիտելիքները նրանց ստեղծման պատմության մասին և փոխանցի հաջորդ սերունդներին:

Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար	1. Նախագծային թեմայի ընտրություն 2. Նախաձեռնող խմբերի ձևավորում 3.Տեղեկատվության հավաքագրում,քննարկում, մշակում 4.Հետազոտական հաշվետվության նախապատրաստում 5.Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա) արդյունքների ամփոփում